

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Դեկտեմբեր 2016

ՀՀ և Համաշխարհային տնտեսության
իրադարձություններ

2008

Nov

Dec

2009

Feb

Mar

Apr

Fast

astic: %K(5) 77.33

%D(3) 75.31

Vol

20,00

MA(13) 4,898,306

Բովանդակություն

Ռիսկերի մասին նախազգուշացում.....	3
Հաճախակի օգտագործվող հապավումներ	4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	5
Իրական հատված.....	6
Պետական հատված.....	9
Դրամավարկային և ֆինանսական հատված.....	11
Արտաքին հատված.....	14
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	18
ԱՄՆ	19
ԵՄ	22
Զինաստան	27
Ճապոնիա	29
Ապրանքային շուկա	31
Արժույթային շուկա.....	38
Ֆոնդային շուկա	45
ՆՈՅՆԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	48

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է դիտարկվի որպես լիարժեք և արժանահավատ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համապատասխան դեպքերում ձգտում է ժամանակին թարմացնել ներկայացված վերլուծական տեղեկատվությունը: Սույն հաշվետվության մեջ պարունակվող տեղեկատվությունը և հետևությունները չպետք է ընկալվեն որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Կոնտակտ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, Դիլինգային Կենտրոն, ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19

Ֆինանսական շուկաների վերլուծաբաններ՝ Թ. Սարգսյան, Ա. Մաթասյան

Հաճախակի օգտագործվող հապավումներ

ԱԳԻ	Արտադրողների գնային ինդեքս
ԴՎՔ	Դրամավարկային քաղաքականություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ՍԳԻ	Սպառողական գների ինդեքս
ՖՊՀ (ԴՊՀ)	Ֆեդերալ (Դաշնային) պահուստային համակարգ
Core	Ցուցիչ, որ ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տատանում ունեցող բաղադրիչներ
MoM	տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցվել է նախորդ ամսվա նույն ցուցանիշը
PMI	Purchasing Managers' Indices . ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները և այլ կարևոր ցուցանիշներ
QoQ	տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցվել է նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
QE	Քանակական մեղմացում
YoY	տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցվել է նախորդ տարվա նույն ցուցանիշը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ





Իրական հատված

2016թ. հոկտեմբերին գրանցվել է ՀՀ տնտեսական ակտիվության նվազում թե՛ տարեկան (YoY) և թե՛ ամսական (MoM) կտրվածքով: Նախորդ ամսվա նկատմամբ հաշվարկված Տնտեսական ակտիվության ինդեքսը հոկտեմբերին կազմել է 81.3%, իսկ նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ՝ 92.2%:

Համապատասխանաբար 2.4% և 4.9% տարեկան աճ է գրանցվել ՀՀ արդյունաբերության և ծառայությունների

ոլորտներում, մինչդեռ ընթացիկ տարվա սեպտեմբերի համեմատ երկու ոլորտներում գրանցվել է անկում: Մասնավորապես, արդյունաբերական արտադրանքի ծավալներն ամսական կտրվածքով նվազել են 2.5%-ով, իսկ ծառայությունների ծավալները՝ 3%-ով: Ամսական MoM կտրվածքով անկում է գրանցվել տնտեսության մյուս բոլոր ճյուղերում ևս՝ բացառությամբ


շինարարության ոլորտի (սեպտեմբերի համեմատ գրանցվել է 0.5% աճ): Առավելագույն տարեկան անկումը գրանցվել է գյուղատնտեսության ոլորտում (նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալները կրճատվել են 29.8%-ով): YoY կտրվածքով



0.4%-ով աճել է ներքին առևտրաշրջանառությունը, սակայն մանրածախ առևտուրն ամսական կտրվածքով գրանցել է 1.4% անկում, իսկ տարեկան կտրվածքով՝ 1.1% անկում՝ կազմելով մոտ 106.6 մլրդ դրամ:


Գրաֆիկորեն ներկայացված են 2016թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ տնտեսության առանձին ճյուղերի տվյալները. առավելագույն մասնաբաժինը՝ մոտ 35%-ը բաժին է ընկնում առևտրաշրջանառությանը (մոտ 1,753.83 մլրդ դրամ), հաջորդ խոշոր ճյուղն արդյունաբերությունն է՝ ամբողջ տնտեսության մոտ 23%-ը (1,152.22

Գրաֆիկ. ՀՀ մանրածախ առևտրի ծավալներ/ 2016թ.
(ամսական)/ մլրդ. դրամ



մլրդ դրամ): 2016թ. հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում ծառայությունների ոլորտին բաժին է ընկել ամբողջ տնտեսության մոտ 21%-ը (1,033.76 մլրդ ՀՀ դրամ), գյուղատնտեսությանը՝ մոտ 15%-ը (757.27 մլրդ դրամ), և ընդամենը 6%-ը կազմել է շինարարության ծավալը (275.63 մլրդ դրամ):

Տարվա երրորդ եռամսյակում ՀՀ ՀՆԱ-ն կազմել է մոտ 1,518.33 մլրդ ՀՀ դրամ, ընդ որում՝ տարվա առաջին երկու եռամսյակների ընթացքում



համապատասխանաբար 4.3% և 1.6% տարեկան աճ գրանցելուց հետո արդեն երրորդ եռամսյակում 2015թ. երրորդ եռամսյակի նկատմամբ գրանցվել է ՀՆԱ մոտ 2.6% կրճատում: Եռամսյակային (ՉոՉ) կտրվածքով գրանցվել է ՀՆԱ մոտ 39.4% աճ:

Դեռևս պահպանվում է գնանկումային միջավայրը. տարեկան

(YoY) կտրվածքով հոկտեմբերին գրանցվել է սպառողական գների ինդեքսի մոտ 0.9% անկում՝ չնայած, որ ամսական կտրվածքով (MoM) սպառողական գների ինդեքսն աճել է 0.5%-ով: Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ սպառողական գները նվազել են 3.1%-ով, ընդ որում՝ առավելագույն անկումը գրանցել են պարենային ապրանքների գները՝ -5.3%, այնուհետև ոչ պարենային ապրանքների գները՝ -2.4%, իսկ ծառայությունների գները նվազել են 0.7%-ով: Հոկտեմբերին ամսական կտրվածքով մոտ 1.2%-ով նվազել են

արդյունաբերողների արտադրանքի գները, 0.4%-ով՝


բեռնափոխադրումների սակագները, 0.1%-ով շինարարության ոլորտում գների ինդեքսը, իսկ գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գներն աճել են 0.7%-ով: Մինչույն ժամանակ

գյուղատնտեսության

արտադրության միջոցների գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ հոկտեմբերին կազմել է 99.1%:


Հոկտեմբերին սեպտեմբեր ամսվա համեմատ նվազել են արտահանման (-6.5%) և ներմուծման (-1.4%) գները, սակայն ներմուծման գների՝ օգոստոսին գրանցված 1.6% աճը մի շարք այլ գործոնների հետ մեկտեղ որոշակիորեն զսպեց գների անկումը (ՄԳԻ-ն նվազեց մոտ 0.5%-ով), իսկ ներմուծման գների՝ արդեն սեպտեմբերին գրանցած զգալի աճը՝ մոտ 5.6% (ամսական աճի՝ տարվա առավելագույն արժեքն է), արդեն իսկ այլ գործոնների հետ մեկտեղ նպաստեց սպառողական գների աճին:

ԱՐԱՐԱՏՖԱՆԿ ԲԲԸ կողմից սահմանափակ թվով բարիքներից կազմված զամբյուղի համար հաշվարկված գնային ինդեքսն 2016թ. սեպտեմբերի նկատմամբ հոկտեմբերին աճել է 0.86%-ով, իսկ արդեն նոյեմբերին հոկտեմբերի համեմատ գնաճը կազմել է 0.4%:



Պետական հատված

2016թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում գրանցվել է ՀՀ պետական բյուջեի եկամուտների կրճատում թե՛ տարեկան և թե՛ ամսական կտրվածքով: Պետական եկամուտների MoM կրճատումը հոկտեմբերին կազմել է մոտ 7.2%, իսկ տարեկան կտրվածքով գրանցվել է եկամուտների ավելի քան 3.2% կրճատում: Հոկտեմբերին պետական եկամուտները կազմել են 95.25 մլրդ ՀՀ դրամ, իսկ ամբողջ հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում՝ 931.24 մլրդ դրամ (որի մոտ 94.3%-ն ապահովվել է հարկային եկամուտների հաշվին): Նշենք, որ 2015թ. հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածի համեմատ ևս գրանցվել է պետական եկամուտների նվազում (մոտ 1%): Ընդ որում՝ 2015թ. տարվա առաջին 10 ամիսների ընթացքում պետական բյուջեի եկամուտների 37.5%-ն ապահովվել էր ավելացված արժեքի հարկի հաշվին (մոտ 351.6 մլրդ դրամ), 26.8%-ը՝ եկամտային հարկի հաշվին (մոտ 252.2 մլրդ դրամ), սակայն արդեն 2016թ. նույն ժամանակահատվածում ավելացված արժեքի հարկի մասնաբաժինն ընդհանուր եկամուտների մեջ նվազել է մինչև 33.7% (313.9 մլրդ դրամ), իսկ եկամտային հարկի մասնաբաժինն՝ աճել մինչև 28.3% (263.9 մլրդ դրամ):



2016թ. հոկտեմբերին ամսական կտրվածքով զգալիորեն աճել են ՀՀ պետական բյուջեի ծախսերը: Նախորդ ամսվա համեմատ աճը կազմել է ավելի քան 14.7%:

Չնայած նման ամսական աճին՝ տարեկան կտրվածքով ծախսերը նվազել են մոտ 0.3%-ով՝ կազմելով 139.1 մլրդ դրամ: Ամբողջ հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերը կազմել են մոտ 1.124 տրլն դրամ, ինչը 2.3%-ով գերազանցում է 2015թ. նույն ժամանակահատվածում պետական ծախսերի ընդհանուր ծավալները:

Արդյունքում, 2016թ. հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը կազմել է մոտ 193.5 մլրդ դրամ, ինչը 35.8 մլրդ դրամով ավելին է, քան 2015թ.



հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում գրանցված դեֆիցիտը:

Դեֆիցիտի ֆինանսավորումը առավելապես իրականացվել է ներքին աղբյուրների հաշվին, որից մոտ 138 մլրդ դրամը բաժին է ընկնում բանկային հատվածին: ՀՀ պետական պարտքը դոլարային

արտահայտությամբ արդեն հոկտեմբերին հասել է մոտ 5.6 մլրդ ԱՄՆ դոլարի, ինչն ավելի քան 10%-ով գերազանցում է տարվա սկզբին պարտքի մեծությանը: 5.6 մլրդ-ից 4.54 մլրդ-ը կազմել է արտաքին պարտքը, իսկ 1.06 մլրդ-ը՝ ներքին:

Հոկտեմբերին սեպտեմբեր ամսվա համեմատ մոտ 6% ու ավել են շրջանառության մեջ պետական պարտատոմսերի ծավալները: Ընդ որում՝ աճն ապահովվել է միջնաժամկետ պարտատոմսերի ծավալների՝ մոտ 4.75%, երկարաժամկետ պարտատոմսերի՝ 9.3% և խնայողական

պարտատոմսերի՝ 11.5%-ով աճի հաշվին, իսկ շրջանառության մեջ կարճաժամկետ



պարտատոմսերի ծավալները հոկտեմբերի 31-ի դրությամբ կրճատվել էին մոտ 0.9%-ով:

Դրամավարկային և ֆինանսական հատված

ՀՀ ԿԲ-ն նոյեմբերի 15-ին արդեն 2016թ. տարվա սկզբից 7-րդ անգամ նվազեցրեց դրամավարկային քաղաքականության հիմնական տոկոսադրույքները՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանելով 6.5%, լոմբարդային ռեպո տոկոսադրույքը՝ 8%, դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույքը՝ 5% (2015թ. դեկտեմբերից հետո տոկոսադրույքներն արդեն նվազել են 2.25 կետով):

%	Ռեպո համաձայնագրեր	Ներգրաված միջոցներ	Լոմբարդային ռեպո
<i>23.12.2015</i>	8.75	7.25	10.25
<i>17.02.2016</i>	8.50	7.00	10.00
<i>30.03.2016</i>	8.25	6.75	9.75
<i>18.05.2016</i>	7.75	6.25	9.25
<i>28.06.2016</i>	7.50	6.00	9.00
<i>16.08.2016</i>	7.25	5.75	8.75
<i>27.09.2016</i>	6.75	5.25	8.25
15.11.2016	6.5	5	8

Տարվա ընթացքում դրամավարկային քաղաքականության աստիճանական թուլացմանն անմիջապես արձագանքել են կարճաժամկետ տոկոսադրույքները, իսկ երկարաժամկետ տոկոսադրույքների վրա ազդեցությունը դրսևորվում է որոշակի ժամանակային լացով: Ստորև ներկայացված են ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավվող մինչև մեկ տարի և մեկ տարուց ավելի ժամկետայնությամբ դրամային և դոլարային ավանդների ու վարկերի միջին տոկոսադրույքները 2016թ. ընթացքում (ամսական): Սլաքներով նշված են նախորդ ամսվա համեմատ գրանցված աճը կամ նվազումը:

%, միջին	Մինչև 1 տարի ժամկետայնությամբ դրամային և դոլարային ավանդների և վարկերի միջին տոկոսադրույթների դինամիկան 2016թ. ընթացքում (ամսական)				%, միջին	1 տարուց ավելի ժամկետայնությամբ դրամային և դոլարային ավանդների և վարկերի միջին տոկոսադրույթների դինամիկան 2016թ. ընթացքում (ամսական)			
	Ավանդներ		Վարկեր			Ավանդներ		Վարկեր	
	դրամային	դոլարային	դրամային	դոլարային		դրամային	դոլարային	դրամային	դոլարային
հվ/16	14.61	7.16	17.75	11.48	հվ/16	13.19	6.08	18.69	11.36
փտ/16	↓ 14.12	↑ 7.50	↑ 18.91	↓ 10.89	փտ/16	↓ 12.37	↓ 5.81	↑ 18.77	↓ 9.02
մտ/16	↑ 14.17	↓ 7.19	↓ 18.74	↓ 9.73	մտ/16	↓ 11.93	↓ 5.11	↓ 18.21	↑ 10.93
ապ/16	↓ 13.73	7.70	↓ 18.43	↑ 10.54	ապ/16	↓ 10.07	↓ 4.50	↓ 17.63	↓ 10.58
մյ/16	↓ 13.24	↓ 6.48	↓ 18.38	↑ 11.16	մյ/16	↑ 10.62	↑ 4.84	↑ 18.10	↑ 10.73
հն/16	↑ 14.39	↑ 6.53	↓ 16.19	↓ 10.28	հն/16	↑ 10.76	↓ 4.82	↓ 16.76	↓ 10.70
հլ/16	↓ 13.34	↑ 6.77	↑ 17.04	↓ 9.58	հլ/16	↑ 10.98	↓ 4.38	↑ 17.65	↑ 10.94
օգ/16	↓ 13.26	↓ 6.71	↓ 16.91	↑ 10.98	օգ/16	↓ 10.54	↓ 4.02	↑ 17.82	↓ 10.63
սպ/16	↓ 12.85	↑ 7.00	↑ 16.97	↓ 10.79	սպ/16	↑ 10.71	↑ 4.73	↓ 17.27	↑ 10.95
հկ/16	↓ 12.67	↓ 6.32	↑ 17.32	↓ 9.98	հկ/16	↓ 9.59	↓ 4.21	↓ 13.90	↓ 10.59

Ինչպես երևում է ներկայացված տվյալներից, հոկտեմբեր ամսվա ընթացքում աճ է գրանցել միայն մինչև մեկ տարի ժամկետայնությամբ դրամային վարկերի միջին տոկոսադրույթը, իսկ մյուս բոլոր կարճաժամկետ և երկարաժամկետ միջին տոկոսադրույթները գրանցել են անկում:

2016թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում գրանցվել է և՛ ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի և՛ ներգրավված ավանդների ծավալների աճ: Ընդ որում՝ աճ է արձանագրվել թե՛ տարեկան (YoY) և թե՛ ամսական (MoM) կտրվածքով: 2016թ. հոկտեմբերին ՀՀ առևտրային բանկերի կողմից ՀՀ ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների ընդհանուր ծավալները սեպտեմբեր ամսվա համեմատ ավելացել են 3.1%-ով, իսկ նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ՝ 17.3%-ով՝ կազմելով 2,175.71 մլրդ ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ հոկտեմբեր ամսվա ընթացքում գրանցվել է տրամադրված վարկերի ընդհանուր ծավալների՝ 1.8% ամսական (MoM) և 8.9% տարեկան (YoY) աճ (ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմել է մոտ 2,253.73 մլրդ դրամ): Վարկերի ծավալների ամսական աճն ապահովվել է միայն դրամային վարկերի՝ մոտ 8.5% աճի հաշվին, մինչդեռ արտարժույթային վարկերի ծավալները դիտարկվող ժամանակահատվածում նվազել են շուրջ 1.7%-ով: Թե՛ սեպտեմբեր ամսվա և թե՛ նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ զգալի աճ են գրանցել ոչ ռեզիդենտներին տրամադրված դրամային վարկերի ծավալները (մոտ 93.4%՝ MoM, 111.9%՝ YoY): Նշենք, որ բավականին մեծ չափերով են աճել նաև ոչ ռեզիդենտներից ներգրավված դրամային ավանդների ծավալները՝ նախորդ տարվա հոկտեմբերի

61.56 մլրդ դրամից և 2016թ. սեպտեմբերի 74.93 մլրդ դրամից հասնելով 121.51 մլրդ դրամի:

Հիփոթեքային վարկերի ծավալներն ավելացել են մոտ 1.1%-ով, իսկ սպառողական վարկերը հոկտեմբերին աճել են մոտ 2.5%-ով:

Նոյեմբերի 16-ին հրապարակված ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի կատարողականի համաձայն՝ կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների թիվը հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է շուրջ 155 000 մարդ, որից 65 000-ը պետական համակարգի մասնակիցներ են, իսկ մնացած 90 հազար մասնակիցը մասնավոր սեկտորի ներկայացուցիչներ են: Ֆոնդերի եկամտաբերությունը ստեղծման պահից կազմում է 25.9% (1 փայի գինը ստեղծման պահին 1000 դրամից աճել է մինչև 1259

դրամ):

Ֆոնդերի

եկամտաբերությունը

2016 թվականի

առաջին տասն

ամիսների

ընթացքում կազմում

է 14.4%

տարեկանացված:

Կենսաթոշակային

համակարգի

ակտիվների 41%-ը

կամ 23.3 մլրդ դրամը

ստեղծաբաշխված են ՀՀ

պետական

պարտատոմսերում,

34%-ը՝ բանկերում և

ոչ պետական

արժեթղթերում (որից

29%-ը կամ շուրջ 17.0

մլրդ դրամը

ստեղծաբաշխված են բանկերում, իսկ 5%-ը՝ կորպորատիվ, հիփոթեքային և միջազգային կազմակերպությունների պարտատոմսերում), և 25%-ը բաժնային արժեթղթեր են (ETF - Exchanged traded funds, արտասահմանյան ֆոնդերի Փայեր):

Աղյուսակ. ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկեր և ներգրավված ավանդներ							
	Հոկտեմբեր 2016թ.		Սեպտեմբեր 2016թ.		Հոկտեմբեր 2015թ.	MoM	YoY
	մլրդ. դրամ	մլրդ. դրամ	մլրդ. դրամ			%	%
ԱՎԱՆԴ	2,175.71	2,111.31	1,854.08			3.1	17.3
Ընդամենը Արտարժույթային Ավանդներ	1,410.24	1,409.47	1,272.07			0.1	10.9
Ընդամենը Դրամային Ավանդներ	765.47	701.83	582.01			9.1	31.5
Ռեզիդենտների Դրամային Ավանդներ	643.96	626.90	520.45			2.7	23.7
Ոչ Ռեզիդենտների Դրամային Ավանդներ	121.51	74.93	61.56			62.2	97.4
Ռեզիդենտների Արտարժույթային Ավանդներ	1,023.07	1,009.40	918.83			1.4	11.3
Ոչ Ռեզիդենտների Արտարժույթային Ավանդներ	387.17	400.08	353.24			-3.2	9.6
ՎԱՐԿ	2,253.73	2,213.47	2,069.23			1.8	8.9
Ընդամենը Դրամային Վարկեր	825.47	760.53	729.37			8.5	13.2
Ընդամենը Արտարժույթային Վարկեր	1,428.26	1,452.94	1,339.86			-1.7	6.6
Ռեզիդենտների Դրամային Վարկեր	704.06	697.77	672.07			0.9	4.8
Ոչ Ռեզիդենտների Դրամային Վարկեր	121.41	62.76	57.30			93.4	111.9
Ռեզիդենտների Արտարժույթային Վարկեր	1,343.09	1,356.09	1,296.52			-1.0	3.6
Ոչ Ռեզիդենտների Արտարժույթային Վարկեր	85.17	96.85	43.34			-12.1	96.5

Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումները /31.10.2016թ. դրությամբ/		
Ֆոնդերում կուտակված գումարները, ՈՐԻՑ՝	57.2 մլրդ ՀՀ դրամ	
ՀՀ տնտեսության ֆինանսավորում, ՈՐԻՑ՝	19.8 մլրդ դրամ	34%
- Բանկային ավանդներ	17.0 մլրդ դրամ	29%
- Կորպորատիվ, հիփոթեքային և միջազգային կազմակերպությունների պարտատոմսեր	2.8 մլրդ դրամ	5%
ՀՀ պետական պարտատոմսեր	23.3 մլրդ դրամ	41%
Օտարերկրյա ներդրումային ֆոնդերի արժեթղթեր	14.1 մլրդ դրամ	25%

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը 31.10.2016թ. դրությամբ (NAV)		
Կառավարչի անվանումը	Կենսաթոշակային ֆոնդի անվանումը	Զուտ ակտիվների արժեք (NAV)
Ամուլեդի Ակբա Ասեթ Մենեջմենթ Արմենիա ՓԲԸ	Հավասարակշռված ֆոնդ	852 մլն դրամ
	Պահպանողական ֆոնդ	26.2 մլրդ դրամ
	Կայուն եկամտային ֆոնդ	478 մլն դրամ
Ցե Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա ՍՊԸ	Հավասարակշռված ֆոնդ	320 մլն դրամ
	Պահպանողական ֆոնդ	27.2 մլրդ դրամ
	Կայուն եկամտային ֆոնդ	178 մլն դրամ
Ընդամենը		57.2 մլրդ դրամ

Արտաքին հատված

2016թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում գրանցվել է ՀՀ արտաքին առևտրաշրջանառության աճ: Տարեկան կտրվածքով աճը կազմել է 8.8%, իսկ ամսական (MoM) կտրվածքով՝ 3.2%:

Արտահանման ծավալները 2016թ. հոկտեմբերին 2015թ. հոկտեմբերի համեմատ աճել են 21.6%-ով, սակայն ամսական կտրվածքով՝ 2016թ. սեպտեմբերի համեմատ որևէ փոփոխություն չի գանցվել: Ինչ վերաբերում է հոկտեմբեր ամսվա ընթացքում ՀՀ ներմուծման ծավալներին, ապա վերջինս աճել է թե՛ տարեկան (+3.4%) և թե՛ ամսական (+4.8%) կտրվածքով:


Ընդհանուր առմամբ ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալները 2016թ. հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում կազմել են մոտ 4.06 մլրդ ԱՄՆ դոլար, որից 1.45 մլրդ.-ը կազմել է արտահանումը, իսկ մոտ 2.61 մլրդ.-ը՝ ներմուծումը:

Արտաքին առևտրաշրջանառության ծավալների աճը 2016թ. հունվար-հոկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է մոտ

6.1%: Ընդհանուր առմամբ նման աճն ապահովվել է ԱՊՀ երկրների հետ մոտ 9.8%, ԵՄ երկրների հետ մոտ 0.7% և այլ երկրների հետ առևտրի՝ մոտ 6.6% աճով:

Ամբողջ հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածի համար ՀՀ առևտրային հաշվեկշռի բացասական սալըոն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի -1.4 մլրդ դոլարի համեմատ նվազել է մինչև -1.15 մլրդ. դոլար:

ՀՀ արտաքին առևտրի 24.8%-ը կազմում է Ռուսաստանի Դաշնության, 10.4%-ը՝ Չինաստանի, 7.3%-ը Գերմանիայի հետ առևտուրը: Ռուսաստանի հետ արտաքին առևտրի ծավալները 2016թ. հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում 2015թ. հունվար-հոկտեմբերի համեմատ աճել են մոտ 13.4%-ով՝ կազմելով 1.07 մլրդ դոլար: Չինաստանի հետ արտաքին առևտուրը դիտարկվող



ժամանակահատվածում նվազել է մոտ 1.1%-ով՝ կազմելով 363.5 մլն դոլար: Ընդ որում՝ Չինաստանի հետ արտաքին առևտրի ծավալների կրճատմանը նպաստել է արտահանման գրեթե կրկնակի կրճատումը, մինչդեռ ներմուծումը դիտարկվող ժամանակահատվածում աճել է մոտ 11%-ով:

Աղյուսակ. ՀՀ արտաքին առևտրի տվյալներ / 2016թ. հունվար-հոկտեմբեր				
(մլն ԱՄՆ դոլար)	Արտահանում	Ներմուծում	Առևտրային հաշվեկշիռ	Արտաքին առևտուր
ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ	327,329.5	667,853.6	-563,760.7	1,218,419.8
ԵՄ ԵՐԿՐՆԵՐ	387,370.1	630,030.7	-203,529.7	978,269.9
Այլ երկրներ	738,987.6	1,315,438.0	-392,344.7	1,870,319.9
ԸՆԴԱՄԵՆԸ	1,453,687.2	2,613,322.3	-1,159,635.1	4,067,009.5

ՀՀ արտահանման գերակշիռ մասն է կազմում հանքահումքային արտադրանքը, որի արտահանման ծավալները հունվար-հոկտեմբեր


Ժամանակահատվածում նվազել են մոտ 3.6%-ով՝ կազմելով 386.1 մլն. դոլար (կրճատվել են նաև ներմուծման ծավալները՝ մոտ 9.6%-ով):

2016թ. ընթացքում նվազել է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրներից գուտ դրամական ներհոսքը: Դոլարային արտահայտությամբ

նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ նվազումը կազմել է մոտ 35.7%, իսկ 2016թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ՝ մոտ 1.4%:

Դրամային արտահայտությամբ դրամական գուտ ներհոսքը հոկտեմբերին կազմել է մոտ 28.7 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ ամսվա 31.5 մլրդ դրամի փոխարեն:

ՌԴ-ից դրամական միջոցների գուտ ներհոսքը կրճատվել է 25.7%-ով՝ կազմելով 49մլն ԱՄՆ դոլար, իսկ ԱՄՆ-ից ներհոսքը նվազել է 35.8%-ով՝ հասնելով 5.4 մլն ԱՄՆ դոլարի:



ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ. հոկտեմբեր 2016

Ցուցանիշ	2016թ. հկ.	Փոփոխություն		2016թ. հվ - հկ.	Փոփոխություն
		YoY(%)	MoM(%)		YoY (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշ, %	X	-7.8	-18.7	X	0.4
Արդյունաբերական արտադրանք, մլրդ դրամ	124.2	2.4	-2.5	1152.2	6.5
Գյուղատնտեսական արտադրանք, մլրդ դրամ	102.7	-29.8	-27.7	757.3	-7.3
Շինարարության ծավալ, մլրդ դրամ	39.5	-12.2	0.5	275.6	-9.8
Առևտրաշրջանառություն, մլրդ դրամ	190.8	0.4	-2.4	1753.8	-0.1
Ծառայությունների ծավալ, մլրդ դրամ	114.0	4.9	-3.0	1033.7	7.7
ՍԳԻ. հոկտեմբեր, %	X	-0.9	0.5	X	-1.5
Պետական բյուջեի եկամուտներ, մլրդ դրամ	95.2	-3.2	-7.2	931.2	-1
Պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ	139.2	-0.4	14.7	1124.8	2.5
Սալդո (+/-), մլրդ դրամ	-43.9	6.3	135.0	-193.6	23.5
Արտաքին առևտրաշրջանառ., մլն ԱՄՆ դոլար	478.9	8.8	3.2	4067.0	6.1
արտահանում	160.6	21.6	0.0	1453.7	19.8
ներմուծում	318.3	3.4	4.8	2613.3	-0.3
Դրամական միջոցների զուտ ներհոսք, մլն ԱՄՆ դոլար	60.4	-26.3	-9.3	X	X
ՀՀ պետական պարտք, մլրդ ԱՄՆ դոլար	5.6	16.1	0.2	X	X
արտաքին պարտք	4.5	10.6	-1.0	X	X
ներքին պարտք	1.1	47.2	5.8	X	X
	2016թ I եռամսյակ		YoY		QoQ
ՀՆԱ, մլն դրամ	897,818.4		4.3		-43.0
	2016թ II եռամսյ.				
	1 127,723.3		1.6		24.1
	2016թ III եռամսյ.				
	1 518,338.5		-2.6		39.4
ԴՎՔ գործիքների տոկոսադրույթներ	Դրամական միջ. ներգր.		Լոմբարդային ռեպո		Վերաֆին-ման
	5.0		8.0		6. 5




Դեկտեմբեր 2016

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ



2016թ. երրորդ եռամսյակում նախնական տվյալների համաձայն ԱՄՆ-ում գրանցվել է 3.2% ՀՆԱ աճ (եռամսյակային, ՉՕՉ):

Նշենք, որ սա արդեն երկրորդ նախնական տվյալն է և գերազանցում է ինչպես տարվա երկրորդ եռամսյակում գրանցված 1.4% աճի ցուցանիշին, այնպես էլ 2.9% աճի առաջին նախնական տվյալին: 2015թ. երկրորդ եռամսյակից հետո սա եռամսյակային աճի




առավելագույն ցուցանիշն է: Նախորդ նախնական տվյալի համեմատ ՀՆԱ աճի ցուցանիշի վերանայումը պայմանավորված էր սպառողական ծախսերի, արտահանման ծավալների և շինարարության ոլորտում բիզնես ներդրումների՝ նախապես գնահատվածի համեմատ առավել բարձր ցուցանիշներով: Համախառն եկամուտների աճը (GDI) կազմել է 5.2%՝ հաջորդելով տարվա երկրորդ քառորդում գրանցված 0.7% աճին:

Արդեն 4-րդ եռամսյակի առաջին ամսվա ընթացքում ԱՄՆ-ում գրանցվել է մանրածախ առևտրի ծավալների աճ: Աճն ամսական կտրվածքով կազմել է 0.8% այն դեպքում, երբ կանխատեսվում էր ընդամենը 0.6%-ով աճ: Առանց ավտոմեքենաների գների հաշվարկվող Core ցուցանիշը ևս գրանցել է 0.8% աճ՝ գերազանցելով նախորդ ամսվա 0.7% և կանխատեսվող 0.5% աճի տվյալները: Մարդահամարի բյուրոյի կողմից հրապարակված տվյալների համաձայն հոկտեմբեր ամսին Core երկարաժամկետ օգտագործման ապրանքների պատվերները, որոնք չեն ներառում տրանսպորտի միջոցները, աճել են 1%-ով (MoM)՝ հաջորդելով սեպտեմբերյան 0.2% աճին: Նման բարձր աճը ենթադրում է մոտ ժամանակներս երկրի արդյունաբերության ոլորտում ակտիվության աճ: Վերամշակող արդյունաբերության ոլորտում գործարար ակտիվության նոյեմբերյան PMI ինդեքսը նույնպես բարձր արժեք է գրանցել՝ 54.1 գործակից, որը գերազանցում է հոկտեմբերի 53.4 գործակցին: Սպառողական շուկայում նույնպես սպասումներն աճի ուղղությամբ են: Միջիգանի

համալսարանի կողմից գնահատվող սպառողական տրամադրվածությունների ինդեքսը նոյեմբերին գրանցել է 93.8 գործակիցը՝ աճի ուղղությամբ վերանայվելով նախապես գնահատված 91.6 գործակցից:

ԱՄՆ-ում աստիճանաբար հաղթահարվում է ցածր գնաճային միջավայրը: Ներմուծման գները հոկտեմբերին աճել են 0.5%-

ով՝ գերազանցելով 0.4% կանխատեսվող և 0.2% նախկին տվյալները: Արտահանման գների ինդեքսի աճը կազմել է 0.2%, ինչը չնայած համապատասխանում է կանխատեսմանը, սակայն զիջում է նախորդ ամսվա 0.3% աճի տվյալին: Փոքր-ինչ արագացել են սպառողական գների աճի տեմպերը: ՄԳԻ աճը հոկտեմբերին 2015թ. հոկտեմբերի համեմատ կազմել է 1.6% (նախկին 1.5%-ի փոխարեն), իսկ ընթացիկ տարվա սեպտեմբերի համեմատ՝ 0.4% (նախկին 0.3%-ի փոխարեն): Չնայած ինֆլյացիայի տեմպերը որոշ չափով արագացել են, այնուամենայնիվ վերջինս դեռևս գտնվում է նպատակային 2%-ից ցածր արժեքներում:



Նոյեմբերին կայացած նախագահական ընտրություններից հետո երկրում զգալիորեն աճել են ինֆլյացիոն սպասումները, ինչը պայմանավորված է ընտրված նախագահի՝ Դ. Թրամփի կողմից հետագա հարկաբյուջետային խթանող միջոցառումների կիրառման վերաբերյալ հայտարարությամբ:



Վերջինս իր նախընտրական քարոզարշավի ընթացքում նշել էր, որ նախագահի պաշտոնում ընտրվելու պարագայում կնվազեցնի հարկային բեռն ու զգալիորեն կավելացնի

ենթակառուցվածքների վրա կատարվող ծախսերը: Կարելի է ենթադրել, որ նման հարկաբյուջետային

քաղաքականության իրագործումը կնպաստի երկրում ինֆլացիայի տեմպերի արագացմանը:

Հոկտեմբերին ամսական՝ MoM, կտրվածքով կանխատեսվածից մեծ, սակայն նախորդ ամսվա համեմատ փոքր չափերով աճ է գրանցել ԱՄՆ տների գների ինդեքսը՝ +0.6% նախկին 0.7%-ի և կանխատեսվող 0.5%-ի փոխարեն: Նշենք, որ ԱՄՆ անշարժ գույքի վերաբերյալ շարունակվում է ոչ հուսադրող վիճակագրության հրապարակումը: մասնավորապես, Ռիելթորների ազգային ասոցիացիայի տվյալներով հոկտեմբերին վաճառքի գործընթացում գտնվող բնակելի անշարժ գույքի քանակն աճել է 0.1%-ով (MoM)՝ նախորդ ամսվա 1.4% աճից հետո, մինչդեռ սպասվում էր 0.2% աճ: Ըստ Ռիելթորների ազգային ասոցիացիայի՝ նման ցածր ցուցանիշի պատճառն աճող պահանջարկի պայմաններում շուկայում առկա ցածր առաջարկն է:

Նոյեմբերին գրանցվել են դրական տեղաշարժեր ԱՄՆ աշխատանքի շուկայում: Ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների թվաքանակն աճել է 178 հազարով՝ գերազանցելով սպասումներն ու նախորդ ամսվա 142 հազարով աճի ցուցանիշը: Հարկ է նշել, սակայն, որ բնակչության միջին ժամային եկամուտները նոյեմբեր ամսին նվազել են 0.1%-ով (MoM)՝ չնայած, որ սպասվում էր 0.2%-ով աճ: Գործազրկության մակարդակն արդեն նոյեմբեր ամսին հասել է վերջին 9 տարիների




ռեկորդային ցածր արժեքի՝ կազմելով 4.6%: Նախորդ ամիս գործազրկության մակարդակը կազմում էր 4.9%, իսկ տարվա ընթացքում գրանցվել էր նույնիսկ 5% արժեք:


Երկրում լրիվ զբաղվածությանը մոտ տնտեսական դրության և կայուն աճող ինֆլյացիայի հետ մեկտեղ, ՀՆԱ-ի աճի ցուցանիշները մեծացնում են դեկտեմբերի 14-ին կայանալիք ԱՄՆ ՖՊՀ նիստում ԴՎՔ բազային տոկոսադրույքի բարձրացման հավանականությունը:

ԵՄ

ԵՄ տնտեսության առանձին ճյուղերում 2016թ. նոյեմբեր ամսվա ընթացքում գրանցվել են առավելապես դրական տեղաշարժեր: Մասնավորապես, վերամշակող արդյունաբերության ոլորտի PMI-ն (Manufacturing Purchasing Managers' Index) նախորդ ամսվա 53.5 արժեքից աճել է մինչև 53.7 (2014թ. փետրվարից հետո գրանցված առավելագույն արժեք): Վերջինիս՝ 50-ից բարձր արժեքները խոսում են ոլորտում առկա ակտիվության մասին, իսկ գրանցված աճը նշանակում է, որ նոյեմբերին ակտիվությունն աճել է: Նոյեմբեր ամսվա ընթացքում ակտիվության աճ է գրանցվել նաև ԵՄ ծառայությունների ոլորտում. ոլորտի PMI-ն նախկին 52.8-ից նախնական տվյալներով աճել է մինչև 54.1 (ս.թ. մարտից հետո առավելագույն արժեք): Արդյունքում՝ արդյունաբերության և ծառայությունների ոլորտների բաղադրյալ PMI-ն (Composite PMI) նախկին 53.3-ից աճել է մինչև 54.1: Տնտեսական առողջության գնահատման առաջնային ինդիկատորներից առաջիկա 6 ամիսների համար տնտեսական տրամադրվածությունների ZEW ինդեքսը նոյեմբերին



գրանցել է 15.8 գործակից՝ նախկին 12.3-ի փոխարեն: Սա նշանակում է, որ ԵՄ-ում աճում են ապագա տնտեսական վիճակի հետ կապված օպտիմիստական սպասումները: Նշենք, որ նախնական տվյալների համաձայն ԵՄ ՀՆԱ տարեկան (YoY) աճը 2016թ. 3-րդ եռամսյակում կազմել է 1.6%՝



համապատասխանելով թե՛

նախկին և թե՛ կանխատեսվող աճի ցուցանիշներին, իսկ եռամսյակային կտրվածքով աճը կազմել է 0.3%՝ ևս համապատասխանելով նախորդ եռամսյակի և կանխատեսվող աճի տվյալներին: ԵՄ-ում կրճատվել է գործազրկության մակարդակը՝ նախկին 9.9%-ից նվազելով մինչև 9.8% (չնայած, որ կանխատեսվում էր աճ՝ մինչև 10%): Նոյեմբերի 17-ին Eurostat-ի կողմից հրապարակվեցին ԵՄ Սպառողական գների ինդեքսի տվյալները՝ հաշվարկված հոկտեմբեր ամսվա համար: Տարեկան կտրվածքով ՄԳԻ-ն, ինչպես և կանխատեսվում էր, գրանցել է նույն 0.5% աճը: Ամսական (MoM) կտրվածքով, սակայն, գնաճի տեմպերը նվազել են՝ կազմելով 0.2% նախկին 0.4%-ի և կանխատեսվող 0.3%-ի փոխարեն: Առանց սննդի և էներգետիկայի

հաշվարկվող

սպառողական գների

Core ինդեքսի աճն

ամսական

կտրվածքով կազմել է

0.1%՝ չնայած, որ

կանխատեսվում էր


0.5% աճ: Տարեկան

կտրվածքով Core

ՄԳԻ աճը կազմել է

0.8%, ինչը

համապատասխանում



մ է նախորդ ամսվա և կանխատեսող աճի տվյալին: ՄԳԻ տարեկան աճը նախնական տվյալների համաձայն նոյեմբերին նախորդ ամսվա 0.5%-ի փոխարեն կազմել է 0.6%:

ԵՄ-ում փողի M3 ագրեգատը հոկտեմբերին նախորդ տարվա հոկտեմբեր ամսվա համեմատ աճել է 4.4%-ով այն դեպքում, երբ կանխատեսվում էր 5%-ով աճ: Մասնավոր հատվածի վարկավորման ծավալների աճը տարեկան կտրվածքով կազմել է ընդամենը 1.8%:

Նոյեմբերին ԵՄ-ում սպառողների վստահության ինդեքսն, ինչպես և կանխատեսվում էր, չնայած, որ դեռևս զրոյից ցածր է, այնուամենայնիվ որոշակիորեն բարելավվել է՝ կազմելով -0.6՝ նախկին -0.8-ի փոխարեն: Ծառայությունների ոլորտի ներկայացուցիչների տրամադրվածությունները նոյեմբերին մնացել են անփոփոխ՝ չնայած, որ սպասվում էր որոշակի բարելավում:


ԵՄ խոշորագույն տնտեսությամբ երկրում՝ Գերմանիայում, 2016թ. 3-րդ եռամսյակում 2015թ. 3-րդ եռամսյակի համեմատ ՀՆԱ աճը կազմել է 1.5%: Նշենք, որ երկրորդ եռամսյակում ՀՆԱ աճը գրեթե կրկնակի գերազանցում էր ներկայիս աճի ցուցանիշին՝ կազմելով 3.1%: Տարվա երրորդ եռամսյակի ՀՆԱ աճի տեմպերի դանդաղում կանխատեսվում էր, սակայն փաստացի տվյալը զիջում է նույնիսկ սպասվող 1.8%-ը: Եռամսյակային (ՉԾԾ) կտրվածքով Գերմանիայի ՀՆԱ աճը ևս զիջում է նախորդ քառորդի (0.4%) և կանխատեսվող (0.3%) ՉԾԾ աճի ցուցանիշներին՝ կազմելով 0.2%: Գերմանիայում տնտեսական տրամադրվածություններն, այնուամենայնիվ, զգալիորեն բարելավվել են. տնտեսական տրամադրվածությունների

ZEW ինդեքսը՝ նախկին 6.2-ից հետո գրանցել է 13.8 արժեք:

Գերմանիայի արդյունաբերության և ծառայությունների

ոլորտների PMI ինդեքսների նախնական տվյալների համաձայն

ծառայությունների ոլորտում 2016թ. նոյեմբերին գրանցվել է որոշակի ակտիվացում՝ ոլորտի PMI-ն նախկին 54.2 և կանխատեսվող 54 գործակցի




փոխարեն գրանցել է 55 արժեք: Հակառակ պատկերն է երկրի արդյունաբերության ոլորտում. նախորդ ամիս գրանցված 55.1 արժեքից արդեն նոյեմբերին արդյունաբերության ոլորտի PMI-ն նվազել է մինչև 54.4 գործակից (չնայած, որ անկում սպասվում էր՝ կանխատեսվում էր ինդեքսի նվազում 55-ից մինչև 54.8, այնուամենայնիվ փաստացի տվյալը զիջում է նաև կանխատեսմանը): Արդյունքում արդյունաբերության և ծառայությունների ոլորտների բաղադրյալ PMI-ն կանխատեսվող 55-ի փոխարեն գրանցել է 54.9 արժեք՝ 0.2 կետով զիջելով նախորդ ամսվա տվյալին: Գերմանիայում Սպառողական գների ինդեքսը հոկտեմբերի ցուցանիշի նկատմամբ փոփոխություն չի կրել՝ պահպանվելով 0.8% (YoY) մակարդակում: Ամսական կտրվածքով գների մակարդակի աճը երկրում կազմել է 0.1% (MoM)՝ նվազելով հոկտեմբերյան 0.2% աճի ցուցանիշից:

Եվրոստատի կողմից հաշվարկվող, ԵՄ անդամ այլ երկրների ցուցանիշների հետ համադրելի՝ հարմոնիզացված սպառողական գների ինդեքսը (HICP) ամսական կտրվածքով նվազել է 0.2 կետով՝ գրանցելով զրոյական ցուցանիշ (MoM), իսկ տարեկան կտրվածքով պահպանվել է հոկտեմբերյան՝ 0.7% (YoY) մակարդակում՝ հակառակ սպասված 0.8%-ի:

Այսինքն՝ անկախ ԵԿԲ կողմից կիրառվող խթանող դրամավարկային քաղաքականությունից, Եվրոպայի խոշորագույն տնտեսությունում գնաճային ճնշումը շարունակում է ցածր մնալ:

Թե՛ տարեկան (YoY) և թե՛ ամսական կտրվածքով հոկտեմբերին գրանցվել է Մեծ Բրիտանիայի

մանրածախ առևտրի ծավալների աճ՝ կանխատեսվածից և նախորդ ամսվա տվյալներից ավելի մեծ չափերով: Մասնավորապես, ամսական (MoM) կտրվածքով մանրածախ առևտրի աճը կազմել է 1.9% այն դեպքում, երբ նախորդ ամիս գրանցվել էր 0.1% և կանխատեսվում էր ընդամենը 0.4% աճ, իսկ տարեկան (YoY) կտրվածքով մանրածախ առևտրի ծավալների աճը կազմել է 7.4%՝ նախկին 4.2%-ի և



կանխատեսվող 5.3%-ի փոխարեն: Նշենք, որ սա տարեկան կտրվածքով գրանցված աճի՝ 2008թ. հունիսից հետո առավելագույն ցուցանիշն է:

Առանց վառելիքի և մեքենաների հաշվարկված մանրածախ առևտրի (Core) ծավալներն ամսական և տարեկան կտրվածքով աճել են համապատասխանաբար 2% և 7.6%-ով՝ ևս գերազանցելով սպասումներն ու նախորդ ամսվա աճը:

Նոյեմբերին արդեն երկրորդ անգամ հրապարակվեցին Մեծ Բրիտանիայի ՀՆԱ աճի նախնական տվյալները: Տարվա երրորդ եռամսյակում ՀՆԱ եռամսյակային (QoQ) աճը կազմել է 0.5%, ինչը համապատասխանում է թե՛ նախորդ նախնական տվյալին և թե՛ կանխատեսվող աճի ցուցանիշին: Տարեկան (YoY) կտրվածքով ՀՆԱ աճը կազմել է 2.3%, ինչը ևս համապատասխանում է կանխատեսմանը: Նշենք, որ տարվա երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՆԱ աճը տարեկան կտրվածքով կազմել էր 2.1%, իսկ եռամսյակային կտրվածքով՝ 0.7%:

Մեծ Բրիտանիայի ֆինանսական հատվածը բնութագրող տնտեսական ցուցանիշներն ընդհանուր առմամբ դրական բնույթ են կրում: Մասնավորապես, մասնավոր հատվածի վարկերի ծավալների կանխատեսվող աճը 4.8 մլրդ-ի փոխարեն


կազմել է 4.9 մլրդ ֆունտ: Հոկտեմբերին հաստատված

հիփոթեքային վարկերի թիվը կազմել է 67.52 հազար այն դեպքում, երբ կանխատեսվում էր 65 հազար, իսկ նախորդ ամսվա տվյալը կազմել էր 63.59 հազար: Փողի M4 զանգվածն աճել է 1.1%-ով:

Արդյունաբերության ոլորտի

ակտիվության մակարդակն արտացոլող PMI ինդեքսի՝ նախորդ ամսվա 54.3 արժեքը վերանայվել է նվազման ուղղությամբ՝ 54.2, իսկ արդեն նոյեմբերին նվազել է մինչև 53.4 գործակից, ինչը խոսում է ոլորտում որոշակի պասիվության մասին:

Մեծ Բրիտանիայի Ազգային վիճակագրական գրասենյակի կողմից հրապարակված տվյալների համաձայն նախորդ չորս ամիսներին 4.9% մակարդակում պահպանվելուց հետո գործազրկության մակարդակը Մեծ Բրիտանիայում



սեպտեմբերին կազմել է 4.8%՝ նվազելով 0.1 կետով: Ջբաղվածության մակարդակը պահպանվել է ռեկորդային բարձր՝ 74.5% մակարդակում: Այնուամենայնիվ, աշխատուժի շուկայում աճի տեմպերի նվազեցում է նկատվում: Տարվա երրորդ քառորդում Մեծ Բրիտանիայի տնտեսությունը ստեղծել է ընդամենը 49 հզ աշխատատեղ՝ ապրիլ-հունիս ամիսներին գրանցված 172 հզ-ի փոխարեն: Թեև տարվա երրորդ քառորդում գործազուրկների թիվը երկրում կրճատվել է 37 հզ-ով՝ կազմելով 1.6 մլն, հոկտեմբերին գործազրկության նպաստի համար դիմորդների թիվն աճել է 9.8 հզ-ով՝ հաջորդելով սեպտեմբերյան 5.6 հզ-ով աճին: Միջին աշխատավարձը հոկտեմբերին պահպանել է նախորդ ամսվա 2.3% աճի ցուցանիշը:

Չինաստան

2016թ. երրորդ եռամսյակում Չինաստանում, որն ԱՄՆ-ից հետո հանդիսանում է աշխարհի երկրորդ խոշորագույն տնտեսությամբ երկիրը, ՀՆԱ աճը կազմել է ընդամենը 6.7%: Արդեն որևէ եռամսյակի ընթացքում ՀՆԱ տարեկան աճ չի գրանցվել 2014թ. երկրորդ եռամսյակից սկսած: 2015թ. 4-րդ եռամսյակում ՀՆԱ աճի տեմպերը հասել էին ռեկորդային ցածր 6.8%-ի, իսկ 2016թ. առաջին եռամսյակում նվազելով մինչև 6.7%՝ այլևս չեն փոփոխվել:

2016թ. նոյեմբերին դրական տեղաշարժեր են գրանցվել Չինաստանի տնտեսության ոչ արդյունաբերական հատվածում: Ոչ արդյունաբերական ոլորտի PMI-ն նոյեմբերին աճել է մինչև 54.7 արժեք՝ նախկին 54-ի փոխարեն: Ծառայությունների ոլորտի PMI-ն նույն ժամանակահատվածում գրանցել է 53.1 արժեք՝ հոկտեմբերի 52.4-ի փոխարեն: Սա ինդեքսի՝ 2015թ. հուլիսից հետո գրանցված առավելագույն արժեքն է և խոսում է ոլորտում ակտիվության աճի մասին: Ենթադրվում է, որ ցուցանիշի նման աճը պայմանավորված է նոր նախագծերի մեկնարկով և ոլորտում նոր պատվերների թվի աճով, ինչպես նաև, հարկ է նշել, որ ծառայությունների ոլորտի զբաղվածների թիվն աճում է արդեն երեք ամիս շարունակ (չնայած, որ նոր աշխատատեղերի թիվն ավելանում է ոչ այդքան արագ տեմպերով, սակայն այդ ցուցանիշը ևս վերջին մի քանի ամիսներին հասել է մաքսիմում արժեքների):

Չինաստանի արդյունաբերական ոլորտի PMI-ն նոյեմբերին գրանցել է 51.7 արժեք, ինչը ևս գերազանցում է նախորդ ամսվա և կանխատեսվող արժեքները: Չնայած, որ ոլորտում արդեն երկու ամիս շարունակ գրանցվել է ակտիվության աճ, այնուամենայնիվ արդյունաբերական արտադրանքի ծավալների՝ կանխատեսվող 6.2% աճի փոխարեն հոկտեմբերին գրանցվել էր ընդամենը 6.1% աճ: Հոկտեմբերին

նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ որոշակիորեն նվազել են Չինաստանի մանրածախ առևտրի ծավալների աճի տեմպերը՝ կազմելով 10% նախկին 10.7%-ի փոխարեն: Հոկտեմբերին արդեն 7-րդ ամիսը շարունակ Չինաստանում գրանցվում էր արտահանման ծավալների


կրճատում: 2015թ. հոկտեմբերի համեմատ արտահանման ծավալները կրճատվել էին 7.3%-ով: 1.4%-ով կրճատվել էին Չինաստանի ներմուծման ծավալները: Արդյունքում առևտրային հաշվեկշռի դրական սալդոն (դոլարային արտահայտությամբ)

կազմել էր 49.06 մլրդ դոլար: Արդեն նոյեմբեր ամսվա տվյալներով վերջին 8 ամիսների ընթացքում առաջին անգամ Չինաստանում գրանցվել է արտահանման ծավալների աճ՝ զգալիորեն գերազանցելով սպասումները: Արտահանումը նոյեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 0.1%-ով՝ չնայած, որ կանխատեսվում էր 5%-ով կրճատում, իսկ ներմուծման ծավալներն ավելացել են 6.7%-ով (սպասվում էր նվազում 1.9%-ով): Արդյունքում առևտրային հաշվեկշռի դրական սալդոն արդեն նոյեմբերին կազմել է 44.6 մլրդ դոլար:


Չինաստանի արտաքին առևտրի ծավալները նոյեմբերին 2015թ. նոյեմբերի համեմատ աճել են 2.9%-ով՝ կազմելով 349 մլրդ դոլար: Ընդ որում՝ ընդհանուր հունվար-նոյեմբեր ժամանակահատվածի ընթացքում երկրի արտաքին առևտրաշրջանառության ծավալները նախորդ տարվա համեմատ նվազել են 6.9%-ով՝ կազմելով 3.31 տրլն դոլար: Ընթացիկ տարվա ապրիլ ամսին Չինաստանի կառավարման մարմինները հայտարարել էին արտաքին առևտրի աջակցմանն ուղղված մի շարք միջոցառումներ կիրառելու մտադրության

համեմատ որոշակիորեն նվազել են Չինաստանի մանրածախ առևտրի ծավալների աճի տեմպերը՝ կազմելով 10% նախկին 10.7%-ի փոխարեն: Հոկտեմբերին արդեն 7-րդ ամիսը շարունակ Չինաստանում գրանցվում էր արտահանման ծավալների

Գրաֆիկ. Չինաստան/ տնտեսական աճ/ 2014-2016թթ., եռամսյակային տվյալներ (YoY)




Գրաֆիկ. Չինաստան/ Ոչ արդյունաբերական ոլորտի PMI/ 2015-2016թթ.



տարվա համեմատ նվազել են 6.9%-ով՝ կազմելով 3.31 տրլն դոլար: Ընթացիկ տարվա ապրիլ ամսին Չինաստանի կառավարման մարմինները հայտարարել էին արտաքին առևտրի աջակցմանն ուղղված մի շարք միջոցառումներ կիրառելու մտադրության

մասին (արտահանման նպատակով վարկերի ապահովագրման ընդլայնում, արտահանողներին վերադարձվող հարկերի ավելացում): Տարվա սկզբից յուանի փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ նվազել է մոտ 5.9%-ով և ամբողջ տարվա կտրվածքով անկումն արդեն կարող է հասնել ռեկորդային արժեքների: Ազգային արժույթի դիրքերի պահպանման նպատակով Չինաստանը օգտագործում է արտարժույթային պահուստները, ինչի հետևանքով վերջինս կրճատվում է արդեն 5-րդ ամիսը շարունակ՝ նոյեմբերին հոկտեմբերի համեմատ նվազելով 2.3%-ով և կազմելով մոտ 3.05 տրլն դոլար (2011թ.-ից հետո նվազագույն արժեք): Սա տարվա սկզբից առավելագույն ամսական կրճատումն է: Նշենք, որ ընդհանուր առմամբ Չինաստանի արտարժույթային պահուստներն արդեն 2014թ. առավելագույն արժեքներից կրճատվել են մոտ 25%-ով:




Ներկայումս նկատվում է Չինաստանի կողմից կապիտալի շարժի նկատմամբ վերահսկողության որոշակի խստացում (կապիտալի արտահոսքի զսպման նպատակով): Վերջինս սահմանափակել է յուանով միջազգային վճարումներն ու ոսկու ներմուծման ծավալները: Չինական կազմակերպությունների՝ յուանով դրամական փոխանցումները չպետք է գերազանցեն վերջիններիս բաժնետիրական կապիտալի 30%-ը:


Ճապոնիա

Նվազեցվել է 2016թ. երրորդ եռամսյակում Ճապոնիայի ՀՆԱ տարեկան (YoY) աճի տվյալը՝ մինչև 1.3%: Նախնական տվյալները ցույց էին տվել հուլիս-սեպտեմբերին ՀՆԱ 2.2% տարեկան աճ: Եռամսյակային կտրվածքով ՀՆԱ աճը վերանայված տվյալներով կազմել է 0.3%՝ նախկին 0.5%-ի փոխարեն: Աճի տվյալների վերանայումը պայմանավորված է ձեռնարկությունների ծախսումների կրճատմամբ:

Ձեռնարկությունները տարվա երրորդ եռամսյակի ընթացքում ծախսումները կրճատել են 0.4%-ով այն դեպքում, երբ կանխատեսվում էր 0.2%-ով աճ: Չնայած, որ ՀՆԱ աճի նոր տվյալները զիջում են նախնական տվյալներին և կանխատեսումներին, այնուամենայնիվ, ավելին են՝ քան տարվա երկրորդ եռամսյակում գրանցված տարեկան 0.7% և եռամսյակային՝ 0.2% աճի տվյալները: Մասնավոր սպառումը ճապոնիայում երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 0.3%-ով այն դեպքում, երբ նախնական տվյալները ցույց էին տվել ընդամենը 0.1%-ով աճ:



Ջուտ արտահանումը տարվա 3-րդ քառորդում ՀՆԱ աճն ավելացրել է 0.3 տոկոսային կետով: Աճել է արտահանումը դեպի Չինաստան, սակայն Ճապոնիայի ներմուծման ծավալները թույլ ներքին պահանջարկի պայմաններում դիտարկվող ժամանակահատվածում նվազել են: Հարկ է նշել, որ Ճապոնիայի ֆինանսների նախարարության կողմից հրապարակված վերջին ամսական տվյալների համաձայն 2016թ. հոկտեմբերին շարունակել են տարեկան կտրվածքով (YoY) արտահանման և





ներմուծման ծավալների կրճատումները: Արտահանման ծավալները հոկտեմբերին 2015թ. հոկտեմբերի համեմատ կրճատվել են 10.3%-ով (նախկին 6.9%-ի և կանխատեսվող 8.6%-ի փոխարեն), իսկ ներմուծման ծավալները կրճատվել են 16.5%-ով նախկին և կանխատեսվող 16.3%-ի փոխարեն:

Նախորդ 7 ամիսների համեմատ նվազել են Ճապոնիայի մանրածախ առևտրի կրճատման տեմպերը՝ նախորդ 1.9% և կանխատեսվող 1.2% կրճատման փոխարեն կազմելով -0.1%, ինչը հունվարից հետո կրճատման նվազագույն ցուցանիշն է: Նշենք, որ ներքին թույն

պահանջարկի պայմաններում տարվա սկզբից գրանցվում էին մանրածախ առևտրի կրճատումներ (0.4% աճ է գրանցվել միայն փետրվարին):

Արդյունաբերական արտադրանքի ծավալները նախնական տվյալներով հոկտեմբերին

սեպտեմբերի համեմատ աճել են 0.1%-ով (սպասվում էր 0.1%-ով կրճատում): Գործազրկության մակարդակը երկրում պահպանվել է նախկին 3% մակարդակում:




Ապրանքային շուկա

Ուսկի: Նոյեմբեր ամսվա սկզբից՝ ԱՄՆ նախագահական ընտրություններից առաջ ոսկու գները զգալի աճ գրանցեցին, ինչն առավելապես պայմանավորված էր

ստեղծված անորոշություններով, ռիսկի նկատմամբ հակվածության նվազմամբ և ապահով ակտիվների նկատմամբ պահանջարկի կտրուկ աճով:


Նախագահի թեկնածու Դ. Թրամփի հնարավոր հաղթանակի հավանականության աճն այդ օրերին գնահատվում էր, որպես ապագա քաղաքականության անորոշության աճ՝ հանգեցնելով ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացման և ապահով ակտիվների նկատմամբ պահանջարկի աճի:



Արդեն նոյեմբերի 9-ին, երբ հրապարակվեցին ընտրությունների վերջնական արդյունքները, և պարզ դարձավ, որ ԱՄՆ 45-րդ նախագահի պաշտոնում ընտրվեց Դ. Թրամփը, ֆինանսական շուկաներում կտրուկ տատանումներ գրանցվեցին. մասնավորապես, ապրանքային շուկայում ոսկու գինը նոյեմբերի 8-9

ժամանակահատվածում՝ մինչ վերջնական արդյունքների հրապարակումը մեկ ունցիայի դիմաց 1336 ԱՄՆ դոլար արժեքի սահմանը հատելուց հետո (աճել էր ավելի քան 5.2%-ով) կտրուկ անկում գրանցեց և շարունակեց նվազել՝ մինչև նոյեմբերի 11-ը՝ կորցնելով մոտ 9%: Արդեն նոյեմբերի 11-18 ժամանակահատվածում

մեկ ունցիայի գինը տատանվում էր 1216-1232 ԱՄՆ դոլարի սահմաններում:



Նոյեմբերի 17-ին հրապարակվեցին մի շարք ԱՄՆ տնտեսական ցուցանիշներ և ելույթ ունեցավ ՖՊՀ նախագահ Ջ. Յելլենը: Հրապարակված տվյալներն առավելապես դրական բնույթ էին կրում, իսկ ՖՊՀ նախագահի ելույթից հետո ավելի աճեցին դեկտեմբերյան նիստում դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի բարձրացման սպասումները (հավանականությունը գնահատվում էր մոտ 92%): Նման

իրավիճակում արդեն նոյեմբերի 17-18

Ժամանակահատվածքում գրանցվեց ԱՄՆ դոլարի սփոթ ինդեքսի ավելի քան 1.3% աճ (հատեց 101-ի սահմանը):

Մի կողմից ռիսկի նկատմամբ հակվածության աճը նվազեցրեց ոսկու նկատմամբ պահանջարկը, մյուս կողմից ԱՄՆ դոլարի նման արժևորումը այլ արժույթներ

տիրապետողների համար դոլարով գնանշվող ոսկին դարձրեց դժվար հասանելի: Արդյունքում, մոտ մեկ շաբաթ 1216-1232 ԱՄՆ դոլարի սահմաններում տատանվելուց հետո ոսկու գինը հատեց միջակայքի ստորին հատվածը՝ գրանցելով 1204 ԱՄՆ դոլարից ցածր արժեքներ:


Նշենք, որ արդեն ԱՄՆ ընտրություններից հետո ամսվա առավելագույն արժեքներից ոսկու մեկ ունցիայի գնի անկումն ամսվա վերջում կազմեց ավելի քան 11%:

Ոսկու Համաշխարհային Խորհրդի եռամսյակային հաշվետվությունների տվյալներով՝ արդեն

տարվա երրորդ եռամսյակում ոսկու նկատմամբ համաշխարհային պահանջարկը



Առաջիկա երեք տարիների ընթացքում ոսկու պաշարների փոփոխության հետ կապված կենտրոնական բանկերի մտադրությունները



Աղբյուր՝ Ոսկու Համաշխարհային Խորհուրդ World Gold Council


կազմել է 992.8 տոննա՝ նախորդ եռամսյակի 1060.4 տոննայի փոխարեն: Ոսկու համաշխարհային խորհրդի տվյալներով կենտրոնական բանկերի հարցումները ցույց են տվել, որ հարցվածների 56%-ը պատրաստվում է առաջիկա երեք տարիների ընթացքում ավելացնել ոսկու պահուստները, իսկ 33%-ը՝ նվազեցնել: Հարցվածների 11%-ը ոսկու պահուստների որևէ փոփոխություն չի նախատեսում:

Նավթ: ՕՊԵԿ-ի ամսական հաշվետվության համաձայն 2016թ. ընթացքում կանխատեսվում է, որ նավթի նկատմամբ պահանջարկի աճը կկազմի 1.23 մլն բարել/օր՝ միջինում կազմելով 94.4 մլն բարել/օր: 2017թ. նավթի համաշխարհային պահանջարկի կանխատեսումը պահպանվել է անփոփոխ (կանխատեսվում է 1.15 մլն բարել/օրով աճ՝ միջինում կազմելով օրական 95.55 մլն բարել):


Ինչ վերաբերում է 2016թ. ընթացքում նավթի համաշխարհային առաջարկի կանխատեսվող մակարդակին, ապա վերջինս հոկտեմբերին 0.1մլն բարել/օրով նվազեցվելուց հետո նոյեմբերին նվազեցվել է ևս 0.78մլն բարել/օրով՝ միջինում կազմելով 56.2 մլն բարել/օր:

ՕՊԵԿ-ի երկրների կողմից նավթի արդյունահանման ծավալները աճել են 240 հազար բարել/օրով՝ հասնելով 33.64մլն բարել/օր մակարդակի (նոյեմբերին արդեն օրական արդյունահանման ծավալները հասել են ռեկորդային բարձր մակարդակի՝ օրական մոտ 34.2 մլն բարելի): Արդյունահանման ծավալների նման աճը գրանցվել է Նիգերիայի, Լիբիայի և Իրաքի կողմից արդյունահանման ծավալների աճի հաշվին:

Նավթի արդյունահանման ծավալների նման աճի պայմաններում ներդրողների շրջանում ամսվա սկզբից նվազեցին նոյեմբերի 30-ին Վիեննայում կայանալիք հանդիպման արդյունքում նավթի արդյունահանման ծավալները 32.5-33մլն բարելի սահմաններում ֆիքսելու վերաբերյալ



հատակ որոշման կայացման սպասումները: Հիշեցնենք, որ դեռ սեպտեմբերին Ալժիրում կայացած հանդիպմանը հիմնական նավթ արդյունահանող երկրները պայմանավորվել էին հանդիպել նոյեմբերի 30-ին Վիեննայում, և սահմանել նավթի արդյունահանման քվոտաները՝ ընդհանուր արդյունահանման ծավալները սահմանափակելով 32.5-33 մլն բարել ծավալների միջակայքում: Փաստորեն, դեռևս նավթի շուկայում պահպանվում է ավելցուկային առաջարկը, ինչը բացասաբար է անդրադառնում վերջինիս գների վրա: Նոյեմբեր ամսվա առաջին երկու շաբաթների ընթացքում գրանցվել է ԱՄՆ-ում ակտիվ նավթահորերի թվի աճ՝ 11-ով՝ հասնելով 452-ի, իսկ արդեն ամսվա երկրորդ կեսին թիվն ավելացավ ևս 22-ով՝ հասնելով 474-ի: Նշենք, որ արդեն իսկ մայիս ամսին տարվա նվազագույն 316 արժեքի հասնելուց հետո սկսել է գրանցվել ակտիվ նավթահորերի թվի աճ, մինչ այժմ արդեն թիվն ավելացել է 158 հատով:




Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ չնայած զգալի աճին, դեռևս ակտիվ նավթահորերի թիվը զիջում է տարվա սկզբում գրանցված առավելագույն արժեքներին: Ակտիվ նավթահորերի թվի աճը նավթի գների վրա անդրադառնում է որոշակի ժամանակային լազով՝ մոտ 4-5 ամիս հետո:

Նշենք, որ արդեն հոկտեմբեր ամսվա ընթացքում ԱՄՆ-ում նավթի օրական արդյունահանման ծավալներն աճել էին մոտ 72 հազար բարելով՝ մինչև 8.522 մլն բարել/օր: Նավթի գները ավելցուկային առաջարկի, հիմնական նավթ արդյունահանող երկրների կողմից նավթի արդյունահանման ծավալների ֆիքսման հարցում որևէ համաձայնության գալու հետ կապված սպասումների նվազման ֆոնին նոյեմբերի 1-14 ժամանակահատվածում նվազեցին ավելի քան 11.9%-ով: Գների անկումը չգուցե նաև Զինաստանում նավթի արդյունահանման ծավալների կրճատման տվյալի հրապարակումը (հոկտեմբերին Զինաստանի կողմից նավթի

արդյունահանման ծավալները նվազել են մոտ 11.3%-ով՝ հասնելով նախորդ տարվա 16.05մլն տոննա/օր (3.78մլն բարել/օր) մակարդակի):

ԱՄՆ Էներգետիկ տեղեկատվական ադմինիստրացիայի կողմից հրապարակվող շաբաթական տվյալների համաձայն ԱՄՆ-ում նավթի օրական արդյունահանման ծավալները նոյեմբերին աճել են 168 հազար բարել/օրով՝ ամսվա վերջի դրությամբ կազմելով 8.69 մլն բարել/օր: Միննույն ժամանակ ամսվա ընթացքում աճել են ԱՄՆ նավթային պաշարները:



Չնայած, որ ավելցուկային առաջարկի բոլոր գործոններն առկա էին՝ ամսվա երկրորդ կեսից ՕՊԵԿ-ի երկրների և այլ նավթ արդյունահանող երկրների կողմից արդյունահանման ծավալների հնարավոր կրճատման սպասումների ֆոնին նավթի

գները որոշակի աճ գրանցեցին. Brent տեսակի նավթի մեկ բարելի գինը նոյեմբերի 14-22

ժամանակահատվածում կարողացավ վերականգնվել մինչև մեկ բարելի դիմաց մոտ 49 ԱՄՆ դոլար արժեքներ: Դրանից հետո գների տատանումները հիմնականում բացատրվում էին ՕՊԵԿ-ի անդամ և այլ նավթ արդյունահանող երկրների կողմից նոյեմբերի 30-ին կայանալիք հանդիպմանը քննարկվելիք

Աղյուսակ. ՕՊԵԿ-ի երկրների կողմից նավթի արդյունահանման ծավալների նախատեսվող փոփոխությունները (մլն. բարել/օր)

	Հոկտեմբեր	Նոր մակարդակներ	Փոփ.
Մաուդյան Արաբիա	10.53	10.06	-0.47
Իրաք	4.56	4.35	-0.21
Իրան	3.69	3.797	0.107
ՄԱԷ	3.01	2.87	-0.14
Քուվեյթ	2.83	2.7	-0.13
Վենեսուելա	2.07	1.98	-0.09
Նիգերիա	1.63	1.63	0
Անգոլա	1.59	1.52	-0.07
Ալժիր	1.09	1.04	-0.05
Բնդունեզիա	0.7	0.7	0.0
Բաքար	0.65	0.62	-0.03
Էկվադոր	0.55	0.53	-0.02
Լիբիա	0.53	0.53	0
Գաբոն	0.2	0.19	-0.01
Ընդհանուր	33.67	32.52	-1.2

արդյունահանման ծավալների ֆիքսման կամ կրճատման հետ կապված հակասական հայտարարություններով:

Նոյեմբերի 30-ին կայացավ ՕՊԵԿ-ի երկրների հանդիպումը, որտեղ 2008թ.-ից հետո առաջին անգամ նավթի արդյունահանման ծավալների կրճատման հետ կապված երկրները համաձայնության եկան և յուրաքանչյուր երկրի համար վերջնականապես սահմանվեցին նավթի արդյունահանման ծավալների քվոտաները: Դեռևս Ալժիրում կայացած հանդիպման ժամանակ նշվել էր, որ անհրաժեշտ է նավթի շուկայում կայունության հասնելու համար կրճատել կամ առնվազն ֆիքսել արդյունահանման ծավալները: Մինչ պաշտոնական հանդիպումը, նավթի գները գտնվում էին որոշակի ճնշման տակ, քանի որ շուկայի մասնակիցների շրջանում հնարավոր համաձայնության կայացման վերաբերյալ առկա էին որոշ կասկածներ: Արդեն նոյեմբերի 30-ին, երբ հայտնի դարձավ, որ համաձայնությունն այնուամենայնիվ կայացվել է, նավթի գները կտրուկ աճ գրանցեցին: Brent տեսակի նավթի գինը հոկտեմբերից հետո առաջին անգամ հատեց մեկ բարելի դիմաց 52 ԱՄՆ դոլար արժեքի սահմանը (մեկ օրվա ընթացքում աճը կազմեց մոտ +10.8%): WTI տեսակի նավթի գինն աճեց մոտ 10.6%-ով՝ գերազանցելով մեկ բարելի դիմաց 50 ԱՄՆ դոլար արժեքը: Նավթի արդյունահանման ծավալների առավելագույն կրճատումը կապահովի Սաուդյան Արաբիան՝ ներկայիս օրական 10.53 մլն բարելից նվազեցնելով մինչև 10.06 մլն բարելի: Արդյունահանման ծավալները ներկայիս մակարդակում կֆիքսեն Նիգերիան (1.63 մլն բարել/օր) և Լիբիան (0.53 մլն. բարել/օր), իսկ Իրանը

կշարունակի

ավելացնել

արդյունահանման

ծավալները՝ մինչև

օրական 3.797 մլն

բարել մակարդակ

(ներկայումս օրական

արդյունահանման

ծավալները կազմում


են 3.69 մլն բարել):

Փաստորեն, ընդհանուր

առմամբ ՕՊԵԿ-ի

երկրների կողմից

նավթի արդյունահանման օրական ծավալները կնվազեն մոտ 1.2 մլն բարելով՝



ներկայիս 33.64 մլն բարել/օրից հասնելով 32.5 մլն բարելի: Ինդոնեզիան որոշում է կայացրել դադարեցնել ՕՊԵԿ-ում իր անդամակցությունը, իսկ նավթի արդյունահանման ծավալների՝ վերջինիս կողմից կրճատվելիք բաժինը կբաշխվի ՕՊԵԿ-ի մնացած անդամների միջև: Նախատեսվում է ՕՊԵԿ-ի կազմից դուրս այլ նավթ արդյունահանող երկրների կողմից արդյունահանման ծավալների կրճատում 600 հազար բարել/օրով, որի 50%-ը պետք է ապահովի Ռուսաստանը (Ռուսաստանի կողմից նոյեմբերին արդյունահանվել է օրական 11.21 մլն բարել նավթ, ինչը վերջին 30 տարվա առավելագույն արժեքն է): ՕՊԵԿ-ի երկրների կողմից կայացված որոշումն ուժի մեջ կմտնի 2017թ. տարվա սկզբից և միայն այն դեպքում, երբ ՕՊԵԿ-ի կազմում չընդգրկված երկրները ևս համապատասխան համաձայնության գան: Դեռևս որոշված քվոտաների պահպանման հավանականությունը գրեթե մոտ է զրոյի, քանի որ պատմությունը ցույց է տվել, որ, որպես կանոն, ՕՊԵԿ-ի երկրների կողմից նավթի արդյունահանման ծավալները գրեթե միշտ գերազանցել են սահմանված ծավալները: 2000թ-ից հետո վերջիններս 108 ամիսներից միայն 5-ի ժամանակ են պահպանել քվոտաները՝ ամբողջ ժամանակահատվածի 97%-ում խախտելով կայացված որոշումները:


Արժութային շուկա

2016թ. նոյեմբեր ամիսը հազեցած էր մի շարք կարևոր տնտեսական և քաղաքական իրադարձություններով, որոնք էական ազդեցություն ունեցան ֆինանսական շուկաների վրա: Ամսվա սկզբից ֆինանսական շուկաների մասնակիցների ուշադրության կենտրոնում էին նոյեմբերի 2-ին ԱՄՆ ՖՊՀ և նոյեմբերի 3-ին՝ Անգլիայի Բանկի հերթական նիստերը, ինչպես նաև նոյեմբերի 8-ին ԱՄՆ-ում կայանալիք ընտրությունները: ԱՄՆ ՖՊՀ՝ նոյեմբերի 2-ին կայացած նիստում որոշվեց դրամավարկային քաղաքականությունը թողնել անփոփոխ. հիմնական տոկոսադրույքը պահպանվեց նախկին 0.25%-0.5% միջակայքում: Դեռևս ՖՊՀ սեպտեմբերյան նիստից հետո ԱՄՆ տնտեսության տարբեր ոլորտներում գրանցվել էին հիմնականում դրական տեղաշարժեր, ինչը զգալիորեն բարձրացրել էր դեկտեմբերյան նիստում ԴՎՔ հիմնական տոկոսադրույքի բարձրացման հավանականությունը, սակայն նոյեմբերի 2-ին քաղաքականության որևէ փոփոխություն չէր ակնկալվում: Ինչ վերաբերում է Անգլիայի Բանկին, ապա վերջինս

ևս նույնաբերական նիստում դրամավարկային քաղաքականության որևէ փոփոխություն չիրականացրեց՝ ԴՎԲ հիմնական տոկոսադրույքը պահպանելով 0.25% մակարդակում, իսկ

քանակական մեղմացման ծրագրի շրջանակներում ակտիվների գնումները՝ 435 մլրդ ֆունտի սահմաններում:

2016թ. նոյեմբեր ամիսը վերջին երկու տարիների ընթացքում ԱՄՆ դոլարի համար առավել բարենպաստ ամիսն էր: Ճապոնական իենի նկատմամբ դոլարը դիրքերն ամրապնդեց ավելի քան 5%-ով, իսկ



Եվրոյի նկատմամբ՝ 3%-ով: Ամսվա ընթացքում հրապարակված տվյալներն առավելապես գերազանցում էին սպասումները՝ արտացոլելով դրական տեղաշարժեր ԱՄՆ տնտեսության առանձին հատվածներում: Մասնավորապես, աճել են ինֆլյացիայի ու զբաղվածների թվի աճի տեմպերը: Այժմ ԱՄՆ ՖՊՀ-ն միակն է բոլոր խոշոր կենտրոնական բանկերից, որ պատրաստվում է տոկոսադրույքների բարձրացման, իսկ ՖՊՀ նախագահ Ջ. Յելլենն իր վերջին ելույթի ժամանակ նշեց, որ ՖՊՀ-ն բոլոր հիմքերն ունի արդեն դեկտեմբերին տոկոսադրույքը բարձրացնելու համար: ԱՄՆ դոլարի սփոթ ինդեքսը, որն արտացոլում է դոլարի դիրքերը 6 հմնական արժույթներից կազմված զամբյուղի նկատմամբ, մինչ նախագահական ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումը զգալի անկում գրանցեց: Անորոշությունների պայմաններում զգալիորեն աճել էր ապահով ակտիվների նկատմամբ պահանջարկը և նվազել ռիսկի նկատմամբ հակվածությունը, ինչը հանգեցրել էր ռիսկային արժույթների դիրքերի թուլացմանը: Մասնավորապես, ԱՄՆ դոլարի սփոթ ինդեքսը, կտրուկ անկում գրանցելով, հասել էր 96.39 նվազագույն արժեքի: ԱՄՆ նախագահական ընտրությունների պաշտոնական տվյալների հրապարակումից հետո նոյեմբերի 9-10 ժամանակահատվածում վերջինս կարողացավ ամբողջությամբ վերականգնել շաբաթվա սկզբից գրանցված անկումը: Դոլարի դիրքերի ամրապնդումը շարունակվեց մինչև ամսվա վերջ (+6.2%):

ԱՄՆ ՖՊՀ դեկտեմբերյան նիստում 0.25 կետով տոկոսադրույքի բարձրացման հավանականությունն, ըստ շուկայի մասնակիցների գնահատման, ԱՄՆ նախագահական ընտրություններից հետո առաջացած օպտիմիզմի ֆոնին ընդհուպ մոտեցել է 100%-ին: Այսինքն, թրեյդերները կասկած չունեն, որ ՖՊՀ-ն այս անգամ կբարձրացնի տոկոսադրույքն, ընդ որում, վստահության նման բարձր մակարդակ երբևէ չէր գրանցվել:


Միևնույն ժամանակ, ինչպես գնահատում են նաև բազմաթիվ փորձագետներ, տոկոսադրույքների բարձրացումը ՖՊՀ համար, առավել մեծ հավանականությամբ, հարկադիր որոշում է: Ընթացիկ տարում ՖՊՀ-ն պարբերաբար խոստացել է դրամավարկային քաղաքականության խստացում: Ընդ որում, ի սկզբանե նախատեսվում էր տոկոսադրույքը բարձրացնել մի քանի անգամ, սակայն յուրաքանչյուր որոշիչ նիստի ժամանակ բերվում էին պատճառաբանություններ արդարացնելու համար բազային տոկոսադրույքն անփոփոխ թողնելու որոշումը (0.25-0.5%): Դ. Թրամփի հաղթանակից հետո վերջինիս քաղաքականության հնարավոր անորոշությունների ու ռիսկերի հետ կապված շուկայի մասնակիցների մտավախությունները փոխարինվեցին հնարավոր հարկաբյուջետային խթանման հետևանքով գնաճի տեմպերի ավելացման սպասումներով (ինֆլյացիոն սպասումները զգալիորեն աճեցին), ինչն էլ ավելի նպաստեց արդեն դեկտեմբերյան նիստում ԴՎՔ

տոկոսադրույքի բարձրացման սպասումների զգալի աճին: Դ. Թրամփը նշել էր, որ ավելացվելու են ենթակառուցվածքների վրա կատարվող ծախսերը, իսկ հարկային բեռը՝ նվազեցվելու է: Նման խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը կնպաստի գների զգալի աճին և ԴՎՔ տոկոսադրույքի բարձրացումն այդ պարագայում առավել քան արդարացված քայլ կլինի:



EUR/USD գույգը նույնաբերին ԱՄՆ նախագահական ընտրություններից առաջ կտրուկ աճելուց և վերջին երկու ամիսների առավելագույն արժեքներ գրանցեցուց հետո արդեն ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո կտրուկ անկում գրանցեց՝ մինչ նույնաբերի 24-ը նվազելով ավելի քան 6.5%-ով և մոտենալով վերջին 1.5 տարվա նվազագույն արժեքներին: Ամսվա վերջին շաբաթվա ընթացքում եվրոյի անկումը փոքր-ինչ զսպվեց, և վերջինս նույնիսկ ԱՄՆ դոլարի նկատմամբ կարողացավ մինչ նույնաբերի 30-ը վերականգնվել մոտ 1.2%-ով: Նույնաբերի 28-ին Եվրապարլամենտի Տնտեսական և Մոնետար հարցերի գծով կոմիտեի լսումների ժամանակ իր ելույթում ԵԿԲ նախագահ Մ.Դրագին նշեց, որ անկախ գլոբալ մասշտաբով առկա տնտեսական և քաղաքական անորոշություններից 2016թ Եվրագոտու տնտեսությունը բավականին ճկուն էր. ինֆլյացիան աստիճանաբար աճել է, իսկ տնտեսական կայունությունը պահպանվել է ԵԿԲ մոնետար խթանման շնորհիվ: Դրագին, սակայն, հավելել է, որ դրամավարկային քաղաքականությունն առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է այն լրացնել նաև ֆիսկալ քաղաքականությամբ և տնտեսության կառուցվածքային ռեֆորմներով: Եվրագոտու երկրների համար կանխատեսվում է ցածր տեմպերով, սակայն կայուն աճ, մինչդեռ համաշխարհային տնտեսության պարագայում սպասումներն առավել զուսպ են:

Անդրադառնալով Մեծ Բրիտանիայի՝ ԵՄ կազմից դուրս գալու գործընթացին՝ Դրագին նշել է, որ հնարավոր բացասական հետևանքներն առավել մեծ ազդեցություն կունենան Մեծ Բրիտանիայի, և ոչ ԵՄ-ի վրա: Իսկ առավել հստակ ազդեցությունը հնարավոր կլինի գնահատել միայն բանակցությունների ժամանակացույցի, ընթացքի և վերջնական արդյունքների պարզ դառնալուց հետո: Ինչ վերաբերում է ԵԿԲ խթանող ԴՎՔ-ին, ապա Դրագին նշել է, որ նույնիսկ Եվրագոտու տնտեսությունում հուսադրող բազմաթիվ միտումների առկայության պարագայում



տնտեսության աճը մեծապես կախված է ֆինանսավորման պայմաններից, որոնք, իրենց հերթին, կախված են շարունակական մոնետար խթանումից:


2016թ. նոյեմբեր ամիսը դարձավ ճապոնական իենի համար վերջին յոթ տարիների վատագույն ամիսը, քանի որ ԱՄՆ նախագահական ընտրություններում Դ. Թրամփի հաղթանակը խթանեց ՖՊՀ կողմից դեկտեմբերին դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի բարձրացման հետ կապված սպեկուլյացիաները: Նոյեմբեր ամսվա ընթացքում իենի անկումը կազմեց 6.5%, ընդ որում՝ նոյեմբերի 4-ից սկսված 3-շաբաթյա անկումը դարձավ 1995թ-ից հետո առավելագույնը (նույն ժամանակահատվածում ԱՄՆ կարճաժամկետ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը նշված ժամանակահատվածում հասավ 2010թ. ապրիլից հետո առավելագույն արժեքների): Նշենք, որ նոյեմբեր ամսվա բոլոր 4 շաբաթների ընթացքում գրանցվում էին իենի նկատմամբ զուտ սպեկուլյատիվ երկար դիրքերի թվի (CFTC) կրճատումներ: Ամսվա առաջին շաբաթվա համեմատ իենի նկատմամբ զուտ սպեկուլյատիվ երկար դիրքերի թիվը (CFTC) կրճատվել է 32.3 հազարով, իսկ միայն ամսվա 4-րդ շաբաթվա ընթացքում, գրեթե կրկնակի կրճատվելով, հասել է 10.9 հազարի (ընթացիկ տարվա հունվարից հետո նվազագույն արժեք):

Նոյեմբերին իենը անկում գրանցեց բոլոր զարգացած երկրների արժույթների նկատմամբ: Մոտ 1.1%-ով ճապոնական արժույթը ԱՄՆ դոլարի նկատմամբ կարողացավ վերականգնվել ամսվա վերջում՝ նոյեմբերի 28-ին, ինչն առավելապես տեխնիկական բնույթ էր կրում (ինչպես նաև որոշ չափով պայմանավորված էր ճապոնիայի աշխատանքի շուկայի, մասնավոր սպառման և մանրածախ առևտրի՝ սպասվածից դրական տվյալների հրապարակմամբ), քանի որ դոլարի թուլացման ֆունդամենտալ գործոնները բացակայում էին: Առաջիկա ամսվա սպասվող իրադարձությունները ֆինանսական շուկայի մասնակիցների շրջանում առավելապես ստեղծում են դեռևս ԱՄՆ դոլարի նկատմամբ ճապոնական արժույթի թուլացման տենդենցի շարունակման սպասումներ:

Նոյեմբերին՝ ամսվա սկզբից հրապարակվեց Մեծ Բրիտանիայի՝ ԵՄ կազմից դուրս գալու համար Լիսաբոնյան 50-րդ հոդվածի կիրառման հետ կապված՝ Անգլիայի Գերագույն Դատարանի որոշումն ըստ որի՝ հոդվածի կիրառման համար դեռևս անհրաժեշտ է պառլամենտի քվեարկությունը: Նման որոշման հրապարակումից հետո փոխարժեքը կտրուկ աճ գրանցեց՝ մոտ 1%՝ հասնելով հոկտեմբերի 7-ից հետո առավելագույն արժեքների: Բացի այդ, հրապարակվեց Մեծ Բրիտանիայի ծառայությունների ոլորտի PMI ինդեքսը (գրանցել է 54.5 արժեք

նախկին 52.6-ի և կանխատեսվող 52.4-ի փոխարեն) և պարզ դարձավ, որ սպասվող պասիվացման փոխարեն հոկտեմբեր ամսվա ընթացքում ոլորտում գրանցվել է որոշակի ակտիվություն:

Նախատեսվում է
ԵՄ կազմից դուրս գալու
համար Լիսաբոնյան 50-
րդ հոդվածի
գործարկումից առաջ
պառլամենտի
քվեարկությունն
իրականացնել
դեկտեմբերի 7-ին: Նշենք,
որ ըստ նախնական
տվյալների՝
պառլամենտի
անդամների գերակշիռ
մասը դեմ էր ԵՄ կազմից
դուրս գալուն: Քանի որ



վերջին ամիսների ընթացքում բրիտանական ֆունտի անկումը հիմնականում պայմանավորված էր հենց Brexit-ով, արդեն նման լուրերի ֆոնին վերջինս սկսեց վերականգնել դիրքերը: Բացի այդ, Անգլիայի Բանկը որոշեց անփոփոխ թողնել դրամավարկային քաղաքականությունը (բազային տոկոսադրույք՝ 0.25%, QE՝ 435 մլրդ ֆունտ): Անգլիայի Բանկի կողմից նոր խթանող միջոցառումներ չկիրառելու լուրը, ինչպես նաև ԱՄՆ արդյունաբերության ոլորտում գործարար ակտիվության որոշակի նվազման և աշխատանքի շուկայում բացասական տեղաշարժերի վերաբերյալ նոր տվյալների հրապարակումը ևս դրականորեն ազդեցին GBP/USD փոխարժեքի վրա:


ԱՄՆ դոլարի նկատմամբ բրիտանական արժույթի դիրքերը որոշակիորեն թուլացան ամսվա երրորդ շաբաթվա ընթացքում, սակայն արդեն նոյեմբերի 23-ից՝ անկախ ԱՄՆ դոլարի փոխարժեքի կտրուկ աճից, բրիտանական ֆունտի դիրքերն, ի տարբերություն այլ արժույթների, դոլարի նկատմամբ ամրապնդվեցին: Վերջինիս նպաստեց նաև Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախարար Ֆ. Համոնդի կողմից հարկաբյուջետային քաղաքականության ծրագրի ներկայացումը, որի համաձայն նախատեսվում է մեծացնել ենթակառուցվածքային նախագծերի վրա կատարվող

ծախսերը պետական պարտքի ավելացման հաշվին՝ դրանով իսկ չմեծացնելով բյուջետային ծախսերը: Վերջինս հանգեցրեց ներդրողների շրջանում բրիտանական ակտիվների նկատմամբ հետաքրքրության աճի՝ հանգեցնելով երկիր ներդրումների ներհոսքի և, որպես արդյունք, ֆունտի փոխարժեքի աճի: Պետական ծախսերի աճը առավել մեծ ծավալով պետական պարտատոմսերի թողարկման հաշվին կհանգեցնի վերջիններիս եկամտաբերության աճին՝ առավել գրավիչ դառնալով ներդրողների համար: Բրիտանական ակտիվների գների աճին է նպաստում նաև Անգլիայի Բանկի կողմից վարվող խթանող ԴՎԲ-ն ու աճող ինֆլյացիոն սպասումները: Բրեքսիթյան հանրաքվեից հետո բրիտանական ֆունտի փոխարժեքի անկումը նպաստեց ինֆլյացիոն ճնշման աճին: Արդյունքում, ներկրվող ապրանքների գնի աճի և Բարձր սպառողական պահանջարկի պայմաններում Բարձր հավանական է դառնում գնաճի՝ նպատակային 2% մակարդակին հասնելը: Ներկայումս ներդրողների համար գրավիչ են նաև բրիտանական ակտիվների գները, որոնք գտնվում են հետբրեքսիթյան ցածր մակարդակում:

Ինչ վերաբերում է ռուսական արժույթին, ապա վերջինս, նոյեմբեր ամսվա առաջին երկու շաբաթների ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ մոտ 5%-ով թուլանալուց հետո, արդեն ամսվա երկրորդ կեսից մինչ նոյեմբերի 30-ը ներառյալ կարողացավ ամրապնդել դիրքերն ավելի քան 3.4%-ով: USD/RUB փոխարժեքն ամսվա ընթացքում հատեց 66 արժեքի սահմանը, սակայն արդեն ամսվա վերջում՝

հետևելով նավթի գների աճին՝ նվազեց՝ մոտենալով 63 արժեքին: Նոյեմբերի 30-ին կայացավ ՕՊԵԿ-ի երկրների հանդիպումը, որտեղ 2008թ.-ից հետո առաջին անգամ նավթի արդյունահանման ծավալների կրճատման հետ կապված երկրները համաձայնության եկան և յուրաքանչյուր երկրի համար վերջնականապես սահմանվեցին նավթի արդյունահանման

ծավալների քվոտաները: Դեռևս Ալժիրում կայացած հանդիպման ժամանակ նշվել էր,



որ անհրաժեշտ է նավթի շուկայում կայունության հասնելու համար կրճատել կամ առնվազն ֆիքսել արդյունահանման ծավալները: Մինչ պաշտոնական հանդիպումը, նավթի գները գտնվում էին որոշակի ճնշման տակ, քանի որ շուկայի մասնակիցների շրջանում հնարավոր համաձայնության կայացման վերաբերյալ առկա էին որոշ կասկածներ, ինչն էլ հիմնականում նպաստում էր ռուբլու դիրքերի թուլացմանը: Արդեն նոյեմբերի 30-ին, երբ հայտնի դարձավ, որ համաձայնությունն այնուամենայնիվ կայացվել է, նավթի գները կտրուկ աճ գրանցեցին: Brent տեսակի նավթի գինը հոկտեմբերից հետո առաջին անգամ հատեց մեկ բարելի դիմաց 52 ԱՄՆ դոլար արժեքի սահմանը (մեկ օրվա ընթացքում աճը կազմեց մոտ +10.8%, իսկ հաջորդ օրերին գինը կարողացավ հատել 55 ԱՄՆ դոլարի սահմանը): WTI տեսակի նավթի գինն աճեց մոտ 10.6%-ով՝ գերազանցելով մեկ բարելի դիմաց 50 ԱՄՆ դոլար արժեքը: Ամսվա վերջում նավթի գների աճի ֆոնին, փաստորեն, ռուսական արժույթը կարողացավ փոքր-ինչ վերականգնվել, ինչի արդյունքում ընդհանուր ամսվա կտրվածքով ԱՄՆ դոլարի նկատմամբ վերջինիս անկումը կազմեց ընդամենը մոտ 1.3%:


Ֆոնդային շուկա

Նոյեմբեր ամիսն ընդհանուր առմամբ բարենպաստ էր ամերիկյան ֆոնդային շուկայի համար՝ չնայած, որ ամսվա առաջին շաբաթվա ընթացքում հիմնական ֆոնդային ինդեքսները գրանցեցին անկումներ:

Մասնավորապես, S&P 500 ինդեքսի անկումը մեկ շաբաթվա ընթացքում կազմեց 1.9%, Dow Jones Industrial Average-ը նվազեց մոտ 1.5%-ով, իսկ Nasdaq Composite Index-ի անկումը


նոյեմբերի առաջին շաբաթվա ընթացքում կազմեց մոտ 2.8%: Ֆոնդային ինդեքսների

Գրաֆիկ. S&P 500 (SPX) ինդեքս/ 2016թ. նոյեմբեր




նման անկումը պայմանավորված էր ԱՄՆ նախագահական ընտրություններից առաջ անորոշության աճով և ներդրողների շրջանում ռիսկի նկատմամբ հակվածության նվազմամբ: Նշված ժամանակահատվածում որոշակի ճնշման տակ էին նաև նավթային ֆյուչերսների գները: Վերջիններիս անկումն ամսվա առաջին շաբաթվա ընթացքում մոտեցավ 10%-ին: Բացի այդ, նոյեմբերի 1-7 ժամանակահատվածում հրապարակված ԱՄՆ տնտեսական ցուցանիշները հակասական էին: Արդեն ԱՄՆ ընտրություններից հետո, սակայն, ամերիկյան գրեթե բոլոր հիմնական ֆոնդային ինդեքսները կտրուկ աճ գրանցեցին՝ հասնելով ռեկորդային բարձր արժեքների:

Գրաֆիկ. Stoxx Europe 600 ինդեքս/ նոյեմբեր, 2016թ.



Ամերիկյան ֆոնդային շուկայում գրանցված աճը պայմանավորված էր հիմնականում նավթի գների աճով և ընտրված նախագահ Դ. Թրամփի կողմից հարկաբյուջետային քաղաքականության խթանող միջոցառումների կիրառման սպասումներով: Դ. Թրամփին իր նախընտրական քարոզարշավի ընթացքում նշել էր, որ նախագահի պաշտոնում ընտրվելու պարագայում ավելացնելու է հարկաբյուջետային քաղաքականության խթանող միջոցառումների ծավալները. մասնավորապես զգալիորեն ավելացնելու է ենթակառուցվածքների վրա կատարվող ծախսերն ու նվազեցնելու՝ հարկային բեռը: Կարելի է ենթադրել, որ նման գործողությունները

Գրաֆիկ. MMBE ինդեքս/ նոյեմբեր, 2016թ.



կավելացնեն արտադրողականությունն ու կհանգեցնեն ընդհանուր տնտեսության պոտենցիալ աճի:

Նախագահական ընտրություններից հետո մինչ ամսվա վերջ S&P 500 ինդեքսն աճեց ավելի քան 6%-ով, Dow Jones Industrial Average-ը և Nasdaq Composite Index-ը՝ մոտ 7%-ով:

Եվրոպական ֆոնդային շուկայում ևս նոյեմբերին՝ ամսվա առաջին օրերին ռիսկի նկատմամբ հակվածության նվազման և նավթի գների անկման ֆոնին գրանցվում էին հիմնական ֆոնդային ինդեքսների անկումներ: Համաեվրոպական Stoxx Europe 600 ինդեքսն ամսվա առաջին մի քանի օրերին ավելի քան 3% անկում գրանցելուց հետո արդեն մինչ ամսվա վերջ աճեց մոտ 4.5%-ով: Հիմնական ֆոնդային ինդեքսների աճն ամսվա վերջում առավելապես պայմանավորված է էներգետիկ ոլորտի կազմակերպությունների բաժնետոմսերի գների աճով (նավթի գներն աճեցին ՕՊԵԿ-ի երկրների միջև նավթի արդյունահանման ծավալների կրճատման հարցում համաձայնության գալու սպասումների ֆոնին):

Նավթի գների աճն ամսվա ընթացքում նպաստեց նաև ռուսական ֆոնդային ինդեքսների աճին: Մասնավորապես, ռուսական MMBE ինդեքսը հասավ իր պատմական մաքսիմումներին՝ ամբողջ ամսվա ընթացքում աճելով ավելի քան 8%-ով:

**ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

1, նոյեմբեր	<i>Ճապոնիայի Բանկի նիստ /Դրամավարկային քաղաքականությունը պահպանվեց անփոփոխ/</i>
2, նոյեմբեր	<i>ԱՄՆ ՖՊՀ նիստ /Դրամավարկային քաղաքականությունը պահպանվեց անփոփոխ/</i>
3, նոյեմբեր	<i>Անգլիայի Բանկի նիստ /Դրամավարկային քաղաքականությունը պահպանվեց անփոփոխ/</i>
8, նոյեմբեր	<i>ԱՄՆ նախագահական ընտրություններ /ԱՄՆ 45-րդ նախագահի պաշտոնում ընտրվեց Դ. Թրամփը/</i>
15, նոյեմբեր	<i>ՀՀ ԿԲ նիստ/ ՀՀ ԿԲ-ն նվազեցրեց դրամավարկային քաղաքականության հիմնական տոկոսադրույքները՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանելով 6.5%, լումբարդային ռեպո տոկոսադրույքը՝ 8%, դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույքը՝ 5%</i>
30, նոյեմբեր	<i>ՕՊԵԿ-ի անդամ երկրների ներկայացուցիչների հանդիպում /երկրները համաձայնության եկան նավթի օրական արդյունահանման ծավալները 2017թ. հունվարից կրճատել 1.2 մլն բարելով/</i>